Digitally signed by HAYRAPETYAN HRACHUHI 5607810178
Date: 2023.04.07 12:19:37 MSK

# ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
Թեմատիկ պլանավորում
2-րդ դասարան
Շաբաթական 1 ժամ

Դասարան՝ 2-րդ
Դասվար՝ Հ. Պարսամյան

| Դաս | ամսաթիվ | Պատկերում բնօրինակից | ժամ |
|---|---|---|---|
| Նպատակը | | • Համաչափության կանոնների մասնակի վերարտադրում<br>• Ոչ լրիվ համաչափության. գունային բծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության համեմատության հիմնական հմտությունների ձևավորում պարզ, հստակ կոմպոզիցիաների ստեղծման և ընդհանրացման կարողությունների ձևավորում:<br>• Դիտման և ուսումնասիրման, ինչպես նաև բնօրինակից նկարչության արդյունքում ձեռք բերված գիտելիքների կիրառման ձևավորում, ինքնուրույն աշխատելու, իրենց գիտելիքները, զգացմունքները թղթին հանձնելու հնարավորությունների ստեղծում:<br>• Գունային հակադրության և նրբերանգի օգտագործման կարողությունների ձևավորում<br>• Առարկաները զննելու, չափելու և պատկերելու կարողության ձևավորում | |
| Վերջնարդյունքները | | • Պատկերի և գունավորի պարզ պատկերներ, ձևեր և առարկաներ:<br>• Պատկերի պարզ նատյուրմորտ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով:<br>• Կիրառի հիմնական և բաղադրյալ գույները:<br>• Առարկաները բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ պատկերի տարբեր միջոցներով (պարզապես ներկաբծերի գունային զուգորդում):<br>• Աշխատանքի ճիշտ տեղադրումը թղթի հարթության մեջ:<br>• Տարբեր չափի թղթերի վրա կոմպոզիցիայի կառուցման առանձնահատկությունները: | |
| 10 | | Լույս ու ստվեր, Նատյուրմորտ | 1 |
| 11 | | Ստվեր և ուրվապատկեր: Բնանկար | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 22 | | Գծանկար, կենդանիներ ուրվագծերի օգնությամբ: | 1 |
| 23 | | Նատյուրմորտ | 1 |
| 34 | | Ծաղկած մարգագետին | 1 |
| **Դաս** | | **Թեմատիկ աշխատանք** | **Ժամ** |
| Նպատակը | | • Գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը, հայրենի բնության արտացոլումը աշխատանքում:<br>• Վերացական կոմպոզիցիաների ստեղծում բնական մոտիվների հիման վրա:<br>• Գունային հակադրության և նրբերանգի օգտագործման կարողությունների ձևավորում:<br>• Գիտելիքների և հմտությունների օգտագործում ձևի և համամասնությունների, շարժման հաղորդման համար, տարբեր թեմաներով պատկերման եղանակի ինքնուրույն ընտրության կարողությունների ձևավորում:<br>• Ծառերի, թռչունների, կենդանիների  ուրվապատկերի ստեղծում:<br>• Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակների բացահայտում: | |
| Վերջնարդյունքները | | • Միտքն արտահայտի հետաքրքիր, թեման պատկերի հեշտությամբ<br>• Պատկերի օբյեկտներ իմաստային, զգացմունքային և գեղագիտական ճաշակ ապահովելով<br>• Նկարագրի և բացատրի աշխատանքի ընթացքը,<br>• Բնօրինակից ստանա վերացական պատկերներ<br>• Ընտրի շրջապատող իրականությունը արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ<br>• Օգտագործի թղթի ողջ մակերեսը<br>• Գունավորի թղթի ողջ մակերեսը<br>• Աշխատի ինքնուրույն<br>• Վերլուծի և մեկնաբանի իր և ընկարների աշխատանքները<br>• Մեկնաբանի և վերլուծի՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ<br>• Մտքերն ու գաղափարներն արտահայտի, եզրագծերով, տոներով և գունային երանգներով | |
| 1 | | Մեր սիրելի ամառը | 1 |
| 2 | | «Հեքիաթի աշխարհում» | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | | Գունագեղ մրգեր | 1 |
| 4 | | Ձարմանայի տերևներ | 1 |
| 5 | | «Աշուն» | 1 |
| 7 | | «Կախարդական ներկապնակ»: Ծիածան | 1 |
| 9 | | Պատմվածքի կամ գրքի ձևավորում | 1 |
| 13 | | Գույն, սառը և տաք գույներ | 1 |
| 14 | | «Իմ խաղալիքները» | 1 |
| 17 | | «Ձմեռ» | 1 |
| 15 | | Պատմություններ Աստվածաշնչից «Նոյան Տապանը և ջրհեղեղը»: | 1 |
| 20 | | «Ուրախ դիմակահանդես» | 1 |
| 21 | | «Իմ ձմեռային արձակուրդները» | 1 |
| 24 | | Պլաստիլինե խաղալիքներ | 1 |
| 27 | | «Մայր իմ անուշ ու անգին» | 1 |
| 28 | | Մեր լեռները (զարդանախշերի պատկերում) լեռների, ամպերի, գետերի և այլնի օգնությամբ) | 1 |
| 29 | | «Իմ հայրենիքը» | 1 |
| 31 | | Հեքիաթ նռան մասին | 1 |
| 33 | | Գարուն | 1 |
| 35 | | Թռչունների պատկերում | 1 |
| 22 | | Հեքիաթային հերոսներ | 1 |
| **Դաս** | | **Դեկորատիվ աշխատանք** | **Ժամ** |
| Նպատակը | | • Գունավոր կամ սպիտակ թղթի վրա ոճավորված դեկորատիվ նախշերի կատարման հմտությունների ձևավորում:<br>• Համաչափության կանոնների մասնակի վերարտադրում:<br>• Առարկաները զննելու, չափելու և պատկերելու կարողության ձևավորում: | |

| | | | |
|---|---|---|---|
| | | • Ծավալի, ուրվագծի և գույնի հաղորդման կարողությունների ձևավորում:<br>• Ճեպանկարելու, հիշողությամբ և պատկերացմամբ իրականության մեջ հանդիպող տարբեր օբյեկտների պատկերման հմտությունների ձևավորում:<br>• Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում: | |
| Վերջնար-դյունքները | | • Պատկերի և գունավորի պարզ պատկերներ, ձևեր և առարկաներ:<br>• Պատկերի գծային զարդանախշ:<br>• Պատկերի զարդանախշ շրջանի մեջ ընդգծի նկարի տեսողական անշարժունությունը<br>• Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ստանա ճանաչելի պատկերներ և հորինվածքներ<br>• Գծերը (նախշերը, տառերը) պատկերի կանոնավոր և ճշգրիտ,<br>• Աշխատի ինքնուրույն<br>• Միտքն արտահայտի հետաքրքիր | |
| 6 | | Շնորհավորական բացիկներ | 1 |
| 8 | | Հրաշք զարդապատկերներ | 1 |
| 12 | | «Հայկական ժայռապատկերներ» | 1 |
| 16 | | «Ձմեռ է գալիս», փաթիլներ | 1 |
| 18 | | «Ամենաբարի Ամանորը», բացիկներ | 1 |
| 19 | | Ամանոր | 1 |
| 25 | | Բուսանախշեր (նախշերի պատկերում հարթության վրա): | 1 |
| 26 | | «Զարդանախշ»: | 1 |
| 30 | | Գորգ, կարպետ, որմնագորգ (հորինել նախշեր և նկարել գորգ) | 1 |
| 32 | | Զատկի հավկիթներ | 1 |
| 36 | | Դրոշներ և զինանշաններ | 1 |
| 37 | | Իմ դպրոցի դրոշը և զինանշանը | 1 |

[Թեմատիկ պլան](#)

**Մեր սիրելի ամառը**









*Համապատասխան երանգներով*
*պատկերել ամառն՝ իրենց հիշողությամբ*
*Ներկայացնել աշխատանքը:*
*Պատկերել ամռանը բնորոշ տեսարաններ՝ ծովափնյա հանգիստ, բերքահավաք, ծաղիկներ, այրող արև և այլն:*

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**
*Պատկերել ամառային տեսարան:*
*Պատկերել ամռանը բնորոշ վայրեր (որտեղ իրենք են եղել):*
*Մեր սիրելի ամառը (ամառային հիշողություններ):*
*Ի՞նչպես են նկարիչները պատկերել ամառը (նշել գույները՝ տաք, սառը):*
*Ի՞նչն է քեզ գրավել ամառը նկարելիս:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**
*Որ ամառը նկարում են հիմնականում տաք գույներով*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

*Նկարել ամառային տեսարաններ:*

*Հորինվածքը գունավորի համապատասխան երանգներով:*

*Ճանաչի հայ նկարիչներին ու նրանց ստեղծագործությունները նվիրված ամռանը (Մ. Սարյան, Մ. Ավետիսյան):*

*Իմանա արևի դերն ու նշանակությունը:*

[Թեմատիկ պլան]

**Զարմանալի տերևները /Կախարդական կերպարանափոխում/**
**Ցուցադրական նյութեր**











**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. *Ըստ քայլաշարի պատկերել տերևներ*
2. *Տարբերել տերևների տեսակները*
3. *Ի՞նչ գույներ պիտի օգտագործեք տերևները գունավորելու համար:*
4. *Ի՞նչպես կարող եք կերպարանափոխել տերևներին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Որ յուրաքանչյուր ծառի տերև տարբեր է մյուսից:*
- *Իմանա տերև նկարելու պարզ քայլաշարը:*
- *Որ տերևներով կարելի է ապլիկացիաներ անել:*
- *Տարվա տարբեր եղանակին տերևների գույնը փոխվում է:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Ինքնուրույն նկարի տերևներ:*
- *Գունավորի նկարած տերևները:*
- *Պատրաստի տերևներով ապլիկացիաներ:*
- *Ճանաչի առնվազն 5 ծառի տեսակի տերևներ:*

**Լույս և ստվեր:**

Պատկերել ծաղկեփնջով պարզ նատյուրմորտ
*Դասարանում տեղադրել մի քանի նատյուրմորտ*

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**
*Ընտրել թղթի դիրքը*
*Ընտրի իր նախընտրած ծաղկեփունջը*
*Ազատ աշխատի գույներով*
*Ի՞նչը գրավեց նկարելիս*
*Ի՞նչ տրամադրություն է տիրում նկարում*
*Ի՞նչ է նշանակում նատյուրմորտ*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**
*Նատյուրմորտ նշանակում է «մեռած բնություն»*
*Քայլերի հաջորդականությունը*
*Պատկերած ծաղիկի անունը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**
*Ճիշտ օգտագործի թուղթը*
*Ազատ աշխատի գույներով*
*Մեկնաբանի իր աշխատանքը*

**Ամենաբարի ամանորը: «Ձնեմարդը եղևնու մոտ»**
***Հորինել փոքրիկ հեքիաթ «Ձնեմարդու և ամանորի մասին»***
***Ինչպես նկարել ձնեմարդ***





**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

*Տարբեր նյութերով և միջոցներով ձևավորել հեքիաթը:*
*Նկարազարդել նախընտրած հատվածը:*
*Պատկերել հերոսներին:*
*Պատկերել ձնեմարդու երազանքը:*
*Ընտրել թղթի դիրքը:*
*Ինչպե՞ս պատկերել ձնեմարդ:*
*Ի՞նչ տրամադրություն է տիրում նկարում:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

*Քայլերի հաջորդականությունը:*
*Որ ձնեմարդն էլ կարող է երազանք ունենալ:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

*Ճիշտ օգտագործի թուղթը*
*Պատկերի ձնեմարդ*
*Փոխանցի տրամադրություն*
*Մեկնաբանի իր աշխատանքը*

Թեմատիկ պլան

**Հեքիաթների աշխարհում**









**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. *Պատկերել հեքիաթի հերոսներ*
2. *Գունազարդել հերոսների հագուստները*
3. *Պատկերել սիրելի հերոսին*
4. *Ինչպե՞ս պատկերել հեքիաթի հերոսներ:*
5. *Ի՞նչն է հեքիաթի հերոսնեիի բնորոշ առանձնահատկությունները:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջաֆրանքների կատարման համարսովորողը պետք է իմանա:**

- *Մարդ, կենդանի նկարելու քայլաշարը*
- *Հերոսներին կերպարային առանձնահատկություններով պատկերելը*
- *Ազգային մշակույթի բնորոշ առանձնահատկությունները*

**Հարցերի պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Նկարի մարդ կամ կենդանի:*
- *Ճանաչի գույներն ու երանգները:*
- *Մեկնաբանի պատկերված հերոսների զգացմունքները (ըստ իր նկարածի):*

[Թեմատիկ պլան](#)

**Սառը և տաք գույներ**





*Համապատասխան երանգներով պատկերել բնանկար կամ նատյուրմորտ բնօրինակից կամ հիշողությամբ*
*Ներկայացնել աշխատանքը:*
*Պատկերներում ուշադրություն դարձնել ընտրված գունային գամմային:*

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**
*Ի՞նչպես են նկարիչները պատկերում բնանկարը (նշել գույները՝ տաք, սառը):*
*Ի՞նչպես են նկարիչները պատկերում նատյուրմորտը (նշել գույները՝ տաք, սառը):*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**
*Որ ամառը նկարում են հիմնականում տաք գույներով*
*Ձմեռը նկարում են սառը գույներով*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**
*Հորինվածքը գունավորի համապատասխան երանգներով:*
*Ճանաչի հայ նկարիչներին ու նրանց ստեղծագործությունները (Մ. Սարյան, Մ. Ավետիսյան):*
*Իմանա արևի դերն ու նշանակությունը:*

[Թեմատիկ պլան](#)

**Նատյուրմորտ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

*Պատկերել 2-3 առարկաներից կազմված պարզ նատյուրմորտ*
*Ընտրել թղթի դիրքը*
*Ճիշտ օգտագործել թղթի մակերեսը*
*Ազատ աշխատել գույներով*
*Ինչպե՞ս կառուցել պատկերվող առարկաները թղթի վրա*
*Ի՞նչ է նատյուրմորտը*
*Ո՞րն է լույսի աղբյուրը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

*Թղթի մեջ պատկերվող առարկաները տեղադրելու ձևը*
*Թղթի մակերեսը օգտագործելու ձևը*
*Սառը և տաք գույները*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

*Կառուցել պատկերվող առարկաները*
*Պատկերել միջավայրը ստեղծագործաբար, օգտագործել թղթի ամբողջ մակերեսը,*
*Աշխատել ինքնուրույն*

[Թեմատիկ պլան]

**«Սուրբ Զատիկ» (հավկիթների ձևավորում)**



**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ գիտես Սուրբ զատկի կամ Հարության գեղեցիկ տոնի մասին*
- *Հարության տոնին հավկիթն ի՞նչ է խորհրդանշում*
- *Զարդարի՛ր հավկիթներ*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

- *Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և իր վերջնական իմաստով՝ վերադարձ առ Աստված:*
- *Ձուն օրինակն է ամբողջ աշխարհի. Հավկիթի կեղևը խորհրդանշում է երկնքը, թաղանթը՝ օդը, սպիտակուցը՝ ջուրը, իսկ դեղնուցը՝ երկրը:*
- *Հավկիթը խորհրդանշում է նաև մեր հարության հույսը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Ինքնուրույն զարդարի հավկիթներ և պատրաստվի Սուրբ զատկի տոնին*
- *Պատրաստի բացիկ՝ նվիրված Սուրբ զատկի տոնին*

[Թեմատիկ պլան]

**Ծաղկած մարգագետին**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

*Ծաղիկները լույս ու ջերմություն են հաղորդում մեզ:*
*Համեմատել տարբեր նկարիչների պատկերած այս ծաղիկները:*
*Ի՞նչ տրամադրություն է տիրում նկարներում: Բացատրել նկարների նմանություններն ու տարբերությունները:*
*Ի՞նչ է բնանկարը*
*Պատկերել ծաղիկներ պարտեզում կամ ծաղկամանում*
*Ընտրել թղթի դիրքը*
*Ճիշտ օգտագործել թղթի մակերեսը*
*Ազատ աշխատել գույներով*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

*Ի՞նչ է բնանկարը*
*Թղթի մակերեսը օգտագործելու ձևը*
*Հիմնական և բաղադրյալ գույները*
*Սառը և տաք գույները*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

*Պատկերել միջավայրը ստեղծագործաբար, օգտագործել թղթի ամբողջ մակերեսը,*
*Օգտագործել գուներանգներ, սառը և տաք գույներ*
*Աշխատել ինքնուրույն*

[Թեմատիկ պլան]

## Պատկերում ենք թռչուններ









**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ գիտես թռչունների մասին*
- *Նկարի՛ր քո ամենասիրելի թռչունը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

- *Թռչունները ոչ միայն գեղեցկացնում են, այլև օգուտ են բերում մեր միջավայրին*
- *Յուրաքանչյուր առարկա նկարելիս կարևոր նախ պատկերի այդ առարկայի ընդհանուր ձևը և հետո նոր անցնի մանրամասներին*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Դիտի նկարելու փուլերը և նույն հերթականությամբ ստանա թռչունների պատկերները*
- *Նկարի իր ամենասիրելի թռչունը*

[Թեմատիկ պլան]

**Գարուն**

Ցուցադրական նյութ՝ վերատպություններ, լուսանկարներ

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

*Բացահայտել շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակները:*
*Առանց նախանկարի պատկերել ծառեր, թռչուններ, կենդանիներ (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա):*
*Պատկերել գարնանային գեղեցիկ տեսարան:*
*Պատկերել ծաղկած պտղատու ծառեր:*
*Ի՞նչ տեսք ունեն ծաղկած ծառերը: Դատելով ծաղիկների գույնից և չափից, կարելի՞ է, արդյոք կռահել մրգատու ո՞ր ծառն է:*
*Ի՞նչ բնանկար կընտրեք:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**
*Շրջակա միջավայրում առկա պատկերները, ձևերը, գույները:*
*Տարբեր նյութերով աշխատելու առանձնահատկությունները:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**
*Արտահայտել միտքը,*
*Պատկերել գաղափարը,*
*Օգտագործել թղթի մակերեսը,*
*Գունավորել հորինվածքը,*
*Թեմատիկ աշխատանքներ կատարելիս կիրառել կերպարվեստի տարրերը:*

Թեմատիկ պլան

**Հեքիաթ նռան մասին**

Ցուցադրական նյութ՝ վերատպություններ, լուսանկարներ

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**







*Ուսումնասիրել շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում, հայկական մանրանկարչության մեջ և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակները:*
*Ուսումնասիրել նռան պատկերը ճարտարապետության, կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակներում*
*Կատարել կրկնօրինակներ:*
*Պատկերել նուռը ուրիշ միջավայրում:*
*Ի՞նչ պատրանք է առաջացնում նռան կերպարը:*
*Ինչպե՞ս կարելի է օգտագործել նռան ոճավորված պատկերը:*
*Կատարել ստեղծագործական աշխատանք «Նուռ» թեմայով:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

*Արվեստի տեսակները,*

*Շրջակա միջավայրում առկա պատկերները, ձևերը, գույները:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**
*Արտահայտել միտքը,*
*Պատկերել գաղափարը,*
*Օգտագործել թղթի մակերեսը,*
*Գունավորել հորինվածքը,*
*Թեմատիկ աշխատանքներ կատարելիս կիրառել կերպարվեստի տարրերը:*

[Թեմատիկ պլան]

**Հեքիաթային հերոսներ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**
*Ուսումնասիրել նկարազարդումները*
*Ուսումնասիրել ստեղծագործություններն ըստ ոճական առանձնահատկությունների:*
*Թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները*
*Նկարագրել պատկերված հերոսներին*
*Պատկերել հեքիաթի հերոսին, հորինել միջավայր*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**
*Նկարազարդված հեքիաթները շատ ավելի գրավիչ և հետաքրքիր են:*
*Միևնույն հեքիաթը տարբեր նկարազարդումներ ունի:*
*Գույնը և գիծը մեծ դեր ունենում հեքիաթների նկարազարդումներում:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**
*Ներկայացնել պատկերները*
*Պատկերել իր հերոսին,*
*Օգտագործել գույնը և գիծը,*

[Թեմատիկ պլան]

## Դրոշներ և զինանշաններ







**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

*Ընթերցել նյութը*
*Պատկերել ՀՀ և Արցախի հանրապետության պետական դրոշները*
*Ընտրությամբ պատկերել աշխարհի ամենահետաքրքիր դրոշներից 3-ը*
*Ի՞նչ են խորհրդանշում ՀՀ դրոշի գույները*
*Ի՞նչ է պատկերված ՀՀ զինանշանի վրա*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

*ՀՀ դրոշի գույների նշանակությունը*
*ՀՀ զինանշանի ուրվապատկերի նշանակությունը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

*Ճիշտ ընտրել գույները*
*Ճիշտ օգտագործել թղթի մակերեսը*

*Մեկնաբանել ՀՀ զինանշանում առկա ուրվապատկերները*
*Պատասխանել, ի՞նչ է պատկերված ՀՀ զինանշանի կենտրոնում, ինչո՞ւ*

[Թեմատիկ պլան]

**Իմ դպրոցի դրոշը և զինանշանը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**
*Ուսումնասիրել պատկերները*
*Պատկերել Դպրոցական զինանշան և դրոշ*
*Ընտրել խորհրդանշական գույներ*
*Ընտրել խարհրդանիշներ*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**
*Հիմնական և բաղադրյալ գույները*
*Ընտրած խորհրդանիշների նշանակությունը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**
*Ճիշտ ընտրել գույները*
*Ճիշտ օգտագործել թղթի մակերեսը*
*Մենաբանել կատարված ընտրությունը*
*Պատասխանել, ի՞նչ է պատկերված զինանշանի վրա*